Հաստատված է «Ուրարտու» համալսարանի
գիտական խորհրդի 2014թ. հուլիսի 11-ի նիստում

Ռեկտոր՝ Ս.Ա.Սեդրակյան

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

# ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅԻ «ՈՒՐԱՐՏՈՒ» ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ

# ԿԵՆՏՐՈՆԻ

## Ի.Ընդհանուր դրույթներ

1.1 Որակի ապահովման կենտրոնը ինքնուրույն կառուցվածքային ստորաբաժանում է, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա:

1.2 Կենտրոնը կարող է փոփոխել իր կարգավիճակը կամ դադարեցնել գործունեությունը համալսարանի կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համալսարանի գիտխորհրդի անդամների 2/3-ի առաջարկությամբ՝ ռեկտորի հրամանով:

1.3 Սույն կանոնադրությունը կարող է լրացվել կամ փոփոխվել համալսարանի որակի ապահովման կենտրոնի անդամների առնվազն 1/2-ի առաջարկությամբ՝ ռեկտորի հրամանով:

## I I. Կենտրոնի խնդիրները

2. Որակի ապահովման կենտրոնի խնդիրներն են՝

2.1 ապահովել, արդիականացնել և զարգացնել կրթության որակի ապահովման համակարգը.

2.2 ապահովել համալսարանում որակի կառավարման ժամանակակից, միջազգային պրակտիկայում փորձարկված տեխնոլոգիաների ներդրում և կիրառում.

2.3 ձևավորել ուսումնական ստորաբաժանումների որակի ապահովման ներքին համակարգ.

2.4 ձևավորել համալսարանի առաքելության իրագործման համար անհրաժեշտ պայմաններ կրթության որակի ապահովման ուղղությամբ:

## I I I. Կենտրոնի գործառույթները

3. Որակի ապահովման կենտրոնի գործառույթներն են՝

3.1 որակի ապահովման գործընթացների վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, մշակում, համապատասխան տեղեկատվության և խորհրդատվության տրամադրում համալսարանի շահագրգիռ ստորաբաժանումներին,

3.2 կրթության կազմակերպման գործընթացի, այդ թվում՝ ուսումնամեթոդական, նյութատեխնիկական, կադրային ապահովվածության արդյունավետության գնահատում, համապատասխան առաջարկությունների ներկայացում,

3.3 համալսարանի ուսումնական ստորաբաժանումների կողմից ուսման որակի ապահովման ներքին գործընթացների պլանավորման և մշակման մասնակցություն,

3.4 համալսարանում կրթական ծրագրերի մշակման և հաստատման գործընթացների մասնակցություն,

3.5 որակի ապահովման ներբուհական քաղաքականության մշակում,

3.6 որակի ներքին գնահատման գործիքակազմի մշակում,

3.7 կրթական գործունեության արտաքին վերահսկողության չափանիշների ապահովման գնահատում,

3.8 որակի արտաքին գնահատում իրականացնող կառույցների հետ համագործակցության իրականացում,

3.9 որակի ապահովման միջազգային փորձի ուսումնասիրություն, համապատասխան մեխանիզմների տեղայնացման ուղղությամբ առաջարկությունների ներկայացում:

## IV. Կառուցվածքը և կառավարումը

4.1 Կենտրոնի աշխատանքները համակարգում է կրթական բարեփոխումների գծով պրոռեկտորը:

4.2 Կենտրոնի հաստիքացուցակը հաստատում և դրա մեջ փոփոխություններ է կատարում ռեկտորը՝ կենտրոնի պատասխանատուի նախաձեռնությամբ և կենտրոնի աշխատանքները համակարգող պրոռեկտորի առաջարկությամբ:

4.3 Կենտրոնը կազմված է կենտրոնի պատասխանատուից, ինչպես նաև ուսումնամեթոդական, տեխնիկական և ուսանողական մշտական գործող հանձնաժողովներից:

4.4 Անհրաժեշտությունից ելնելով կարող են ստեղծվել ժամանակավոր հանձնաժողովներ:

## V. Կենտրոնի պատասխանատուն

5.1 Կենտրոնը գլխավորում է կենտրոնի պատասխանատուն, ում պաշտոնի նշանակում և ազատում է համալսարանի ռեկտորը՝ գիտխորհրդի առաջարկությամբ.

5.2 Կենտրոնի պատասխանատուն պարտավոր է՝

5.2.1. ղեկավարել և վերահսկել կենտրոնի հանձնաժողովների աշխատանքները,

5.2.2. պատասխանատու է կենտրոնի աշխատանքների որակի և նրա առջև դրված խնդիրների ու գործառույթների կատարման համար,

5.2.3. ստեղծել կառույցների ռազմավարական ծրագրերի մշակման մեթոդական ուղեցույցներ,

5.2.4. կազմել որակի ապահովման գծով տեղեկատվության բարձրացման սեմինարների, կլոր սեղանների ծրագրեր,

5.2.5. կազմակերպել և իրականացնել բուհի նախնական ինքնավերլուծություն,

5.2.6. մշակել բենչմարքինգի մեթոդիկա,

5.2.7. կազմակերպել ներբուհական և միջբուհական բենչմարքինգ,

5.2.8. ստեղծել ներքին և արտաքին շահակիցների պահանջները բացահայտող մեխանիզմների (կարգ, հարցաթերթիկ),

5.2.9. ստեղծել շահակիցների կողմից բուհի գնահատման մեխանիզմներ և գործիքակազմ,

5.2.10. ստեղծել կրթական ծրագրերի որակի գնահատման նոր մեխանիզմներ,

5.2.11. ձևավորել որակի ներքին ապահովմանն ուղղված ուսանողական շարժում,

5.2.12. ներդնել ուսանողների հետ լրացուցիչ խորհրդատվական պարապմունքների համակարգ,

5.2.13. կենտրոնի պատասխանատուն կենտրոնի աշխատանքների համար հաշվետու է համալսարանի գիտխորհրդին: